



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 26 ՅՈՒՐԱ, 2021

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԸ ԻՄ ՅՈՅՍԻ ԵՐԳՍ

Յիշէ խոստումդ, որ Կուրի ինձի՝ քու ծառայիդ. այն խոստումը, որուն վրայ դրի յոյսս: Տառապանքիս մէջ սա է մխիթարանքս, որ քու խօսքդ կեանք Կուլաւ ինձի: Հակառակ ամբարտաւան մարդոց բուռն ծաղրանքին, ես Օրէնքդ չխտորեցայ: Անցեալին Կուլած վճիռներդ միշտ իմ մտքիս մէջ են, Տէր, անոնցմով կը քաջալերուիմ: Զայրոյթով կը լեցուիմ ամբարիշտներուն համար, որոնք Օրէնքդ լքած են: Այս պանդուխտ կեանքիս մէջ կանոններդ են մշտական երգս: Գիշերուան մէջ անունդ միշտ իմ մտքիս մէջ ունիմ, Տէր, եւ Օրէնքիդ մասին կը խորհիմ: Կեանքի մէջ այս է բաժինս.– Հրահանգներուդ հնազանդիլ:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
այ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուր եւ ի գիշերի,
ի նստիլ ի փան, ի զնայ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԺՈՐ



ԱՌԱՎԿԱՅ 13 ԳԼՈՒԽ

ԻՍՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԹԱՍՏՈՒԹԻՒՆ 13:12-25

Այսօրուան սաղմոսը մեզի կը յիշեցնէ քանի մը բաներ.

1. Ի՞նչ բանի վրայ դրած ենք մեր յոյսը:
2. Տառապանքի ժամանակ, ո՞վ է մեզ մխիթարողը:
3. Մեր շուրջ եղած անցուդարձերը կամ մարդիկ, պարճառ են, կամ կրնա՞ն ըլլալ, որ մենք մեր ուղղութիւնը փոխենք:
4. Այս կեանքը ուրիշ բան չէ, եթէ ոչ պանդխտութեան փարիներ, եւ այդ ընթացքին, ի՞նչ երգ կ'երգեն:
5. Օգնութեան ժամանակ, որո՞ւ անունը մեր միտքը կու գայ:

Այս հարցադրումները, ոչ միայն այսօրուան սաղմոսին հետ կապուած հարցադրումներ են, այլ ամբողջ Աստուածաշունչ Մատեանին հետ կապուած, առաւել եւս, Առակաց գիրքին, որուն սերտողութիւնն է որ կը կարարենք, եւ արդէն հասած ենք 13րդ գլխի երկրորդ մասը 12-25 հմր:

Պաշտօնը յոյսը սիրող կը հիւանդանցէ, բայց փափաքին հասնիլը կեանքի ծառ մըն է՝ 12 հմր: Արարա-յայտութիւն մըն է, որ կու գայ մեզի սորվեցնելու, նախ ինչ բանի վրայ դրած ենք մեր յոյսը, ինչպիսի սպասում ունինք այդ յոյսով: Որովհետեւ յաճախ այնպիսի բաներու յոյս դրած կ'ըլլանք, որ յետոյ անպայ-մանօրէն կը յուսահատինք: Այդ բոլորի պարճառը այն է որ մենք սպասումներ ու ակնկալութիւններ ունինք, որոնք չեն գար Արարիչէն, այլ պարզապէս մեր մարդկային ծրագիրներն են, որոնք թերի են, խախտու ան: Բայց երբ մեր յոյսը Արարչին վրայ ենք դրած, ահա այն արեւն այդ փափաքին հասնիլը կեանքի ծառ մըն է, այլ խօսքով Դրախտային վիճակ, որովհետեւ Դրախտի պարտեզին մէջ էր կեանքի ծառը:

13-րդ համարը անգամ մը եւս կը յիշեցնէ, ըսելով. Խօսքը արհամարհողը, այսինքն՝ Աստուծոյ խօսքը, պարտեզը անտեսողը, պիտի կորուի, իսկ այդ խօսքէն վախցողը վարձք պիտի ստանայ:

Իմաստունին օրէնքը կեանքի աղբիւր է, մահուան որոգայթէն ազապ մնալու համար՝ 14 հմր: Այո, Աս-տուծոյ խօսքը, օրէնքը կեանքի աղբիւր է, պարզապէս խօսքեր չեն, այլ կեանք պարգետող: Ինչ բանի մէջ կը կայանայ անոր կեանք պարգետելու հանգամանքը, եւ ինչպէս կրնանք մահուան որոգայթէն ազապ մնալ: Այն փորձութիւնը որ յաճախ կը հրամցնէ չարը, խորքին մէջ մեզ դէպի մահ առաջնորդելու նպատակ ունի: Այս պարագային մահը ֆիզիքական մահուան մասին չէ: Այնպէս ինչպէս Դրախտի պարտեզին մէջ երբ Աստուած ըսաւ, Ադամին ու Եւային, այն օրը որ ուրեւ պիտի մեռնիս: Անոնք կերան եւ մեռան, այս պարագային հոգեւոր մահը ճաշակեցին: Բայց եթէ Աստուծոյ Խօսքին կարգած մնային, մահուան որոգայթէն, դակարդէն գերծ պիտի մնային: Այսօր ալ նոյն փորձութիւնը որ կը հրամցուի, ի՞նչով կրնանք դէմ դնել այդ փորձութեան: Յիշենք Քրիստոսի փորձութիւնները, ամէն անգամ երբ փորձիչը ներկայացաւ, Քրիստոս պարասխանեց, ըսելով. «Գրուած է»: Ահա նոյն այդ գրուածն է, որ Առակաց գիրքը կը ներկայացնէ, որ մեզ մահուան որոգայթէն կ'ազապէ:

17-րդ համարը կը ներկայացնէ, թէ ինչպիսի պարզամտութիւն կամ դեսպանութիւն կ'ընենք ներկայացնելով զԱստուած: Որովհետեւ Աստուծոյ ներկայացուցիչն ենք: Խօսքը կը ներկայացնէ քաղաքա-կան իմաստով, բայց նաեւ անոր մէջ կայ հոգեւոր բաժինը: Եթէ չար պարամաւոր է, թշուառութեան մէջ կ'իյնայ, իսկ եթէ հաւաքարիմ, բժշկութիւն է: 18-19 համարները կրկնութիւն խօսքեր են, որուն անդրա-դարձանք քիչ առաջ, երբ խօսքը կը վերաբերի խրատ լսողը կամ անարգողը, եւ իւրաքանչիւրին հետե-ւանքը: 20-րդ համար պարզ, բնական ու փրամաբանական արտայայտութիւն մըն է, որուն մէկ փարբերակը Պօղոս Առաքեալ կը յիշէ ըսելով. «Չար ընկերը մաքուր նկարագիրը կը խաթարէ»: Այսպէս ալ կ'ըսէ. «Իմաստուններուն հետ քաղողը իմաստուն կ'ըլլայ, իսկ անմիտներուն ընկերացողը չարիքի կը հանդիպի»:

Հետաքրքրական է 22-րդ համարը, «Բարի մարդը իր թոռներուն ժառանգութիւն կը թողու», որ կը նշա-նակէ, բարի մարդը, բարութեամբ ապրուած կեանքով ոչ միայն ինք կ'օգտուի, այլ անոր օգտակարութիւնը կը հասնի մինչեւ անոր թոռները: Առիթով մը Աստուած այս խողորմը պիտի փար Իսրայէլին, ըսելով. «Մինչեւ հազար սերունդ պիտի օրհնեն»: Արարաւայտութիւն մըն է, որ ըսել կ'ուզէ, թէ ինչպէս սերունդէ սերունդ կը փոխանցուի, այնպէս ինչպէս մեղքի պարագային երունդէ սերունդ կը փոխանցուի, նոյնպէս ալ օրհնութեան պարագային: Իսկ 24-րդ համարը կու գայ յիշեցնելու, ըսելով. «Գաւազանին խնայողը իր որդին կ'ապրէ», որ ըսել կ'ուզէ, իր գաւակը չհաստիարակողը, իսկ գաւակը սիրողը կանուխ կը խրատէ: Իսկ 25-րդ համարը կը ներկայացնէ արդարին վիճակը, թէ գիտէ գոհանալ, իսկ ամբարիշտը միշտ ալ կարիք ունի եւ գոհացում չունի: